

այսօրուան առնչութիւնն ու քաղաքական կշիռը բնորոշելէ առաջ, կ'արժէ ակնարկ մը նետել անցեալ պատմութեան վրայ, եւ տեսնել թէ այդ երկու աղբիւրու շարժումները ո՞րչափով իրար խաչաձեւած կամ իրարու օժանդակած են՝ պատմութեան խոշոր վերլուծարարներու ընթացքին, եւ թէ՛ մեր օրերուն ի՞նչ արդիւնքներ ստացած են երկու ժողովուրդները, որպէս հետեւանք իրենց անցեալ պատմութեան:

Շատ հետաքրքրական է գիտնալ թէ 15-րդ դարէն սկսեալ հայերն ու քիւրդերը պատմական խոշոր անցքերու ընթացքին կրցած են որեւէ համաձայնութեան դալ՝ արաբքին վրտանդներու դէմ: Բնական է, այս յօդուածի սահմաններէն դուրս կ'իյնայ նոյնիսկ համառոտակի պատկերը տալու հայոց վիճակի մասին, 12-րդ դարէն մինչեւ Օսմանեան տիրապետութիւնը, երբ հայերն ու քիւրդերը հաւասարապէս կ'իյնան թուրքերու գերիշխանութեան տակ:

Հայերը այդ երկար դարերու ընթացքին ենթակայ էին քառատրոփ արշաւանքներու, եւ մէկը միւսէն աւելի աւերիչ իշխանութեանց փոփոխման: Որքան կը մօտենանք 14-րդ եւ 15-րդ դարերուն, պատմութեան տուած տեղեկութիւնները այնքան անզոհացուցիչ կը դառնան: Թրքական տիրապետութենէն յետոյ մինչեւ 18-րդ դարու վերջերը Տաճկահայաստանի մասին ընդհանրապէս, իսկ անոր ներքին դաւառներու մասին՝ մասնաւորապէս, պատմական քաղաքական արժէք ունեցող տեղեկութիւնները շատ սակաւ են: Հայերը ստիպուած էին իրենց դուռը պահել աւելի հզօր տիրապետողներէն: Թաթարները, Սելճուքները, պարսիկները, օսմանցիները, վրացիները, աւելի անմիջական դեր կը խաղային հայոց կեանքին մէջ, քան քիւրդերը, որոնք 1500-ական թուականէն յետոյ սկսան տարածուիլ Տաւրոսէն հիւսիս՝ Տաճկահայաստանի մէջ<sup>\*</sup>): Բայց 15րդ

դարու կէսերէն սկսած քիւրդերու աղբիւրութիւնը խիստ զգալի կ'ըլլայ: Ակ-կոյունլունքէն Ուզուն Հասան բէկ ամիրը, որ վերջէն Սուլթան եղաւ, իր ամբողջ Տիարաքէրի հաստատեց, տէր դարձաւ քրդական բոլոր ուժերուն, ու մի առ մի իր տիրապետութեան ենթարկեց Ականդէրի նախկին երկիրները, ընդ որս Մուշ, Բաղէշ, Ուլաթ եւ Բաքրեւանդ (պրոֆ. Վ. Տօմաշէկ, «Սասուն», էջ 55): Չամչեան (Գ. էջ 502) ասոնց վրայ Սասունն ալ կ'աւելցնէ:

Կէս-անկախ Սասունը, ուրեմն 15-րդ դարու կէսերուն կ'ենթարկուէր Ուզուն Հասանի

կաններուն կը յիշատակէ մարերու (քիւրդեր) գոյութիւնը Սասնոյ եւ Ույթի լեռնադաւառներու մէջ:

Քրդերու զաղթաշարժերու մասին հետաքրքրական տեղեկութիւններ կան քիւրդ հարստութեանց պատմագիր Շէրիֆ-էտ-Տին Բաղէշցիի պատմութեան մէջ, որ համառօտակի մէջ բերած է Վ. Տօմաշէկ իր «Սասուն» ուսումնասիրութեան մէջ:—

«Շէրիֆ-էտ-տին Բաղէշցիին, հնագոյն ժամանակներու համար՝ առանց տարին որոշ նշանակելու՝ կ'ըսէ թէ Ուլաթիսէն ու Բուլրասէն շատ մը Հակարեան ցեղեր Ույթ դաղթեցին. եւ այս ցեղերէն ոմանք ալ՝ զ. օ. Բալէկեանք, Մօտրիկեանք, Ռուզէկեանք, Անտակեանք, Ղարզանեանք լեռն անցնելով՝ դէպի հարաւ Սասուն գացին: Այս ամէն ցեղերը նորապարկերէնի շատ մօտիկ դաւառաբարառ մը՝ քրդմէնեան դաւառաբարառը կը խօսին: Ընդհակառակը շատ մօտ ի Դուզլիկեան կամ «Աւաղակ-Քրդերու» ծագումը, որ երկու եփրատներու մէջ Դէրսիմ լեռնադաւառը կը բնակին. ասոնք շատ տարբեր դաւառական մը՝ այսինքն՝ Ձաղա ըսուած դաւառաբարառը կը խօսին և հայերէնէ փոխառեալ ինչ ինչ բառեր ալ ունին, այսպէս մինչեւ անգամ զի = հայերէն ձի: Շատ հնագոյն ժամանակ մը եկած պիտի ըլլան ասոնք այստեղ: Թերեւս երբեմն Վասպուրականի լեռները բնակող մարդկանց սերնդէն ըլլան, որոնց նախնական դաւառը հին-հայկական գրութեանց մէջ Մարդաստան կը կոչուի»: («Սասուն», էջ 53):

<sup>\*</sup> թուրքական Մեծօրիցիին նկարագրելով 1420-1437-ի ժամանակուան Կարա-կոյունլու եւ Ակ-կոյունլու թուրքմէններու կռիւները եւ անոնց պատերազմները քիւրդ ցեղապետներու դէմ, առաջին անգամն ըլլալով, այդ թուա-